ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ՍԱՌԱ ՄԱԼԵՔ ՄՈՀԱՄՄԱԴԻ**

# ԹԵՀՐԱՆԻ ԹԱՏՐՈՆՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ

ԺԸ.00.01 - «Ճարտարապետություն և ճարտարապետական դիզայն»
մասնագիտությամբ արվեստագիտության թեկնածուի
գիտական աստիճանի հայցման համար

**ՍԵՂՄԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ – 2020

---

**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ**

**САРА МАЛЕК МОХАММАДИ**

# АРХИТЕКТУРА ТЕАТРОВ ТЕГЕРАНА В СРАВНЕНИИ С АРМЯНСКИМИ ТЕАТРАМИ РЕГИОНА

**АВТОРЕФЕРАТ**

**диссертации на соискание ученой степени
кандидата искусствоведения по специальности
18.00.01 – “Архитектура и архитектурный дизайн”**

**ЕРЕВАН – 2020**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր
**ՔԵՐԹՄԵՆՋՅԱՆ Դավիթ Գրիգորի**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր
**ՀԱՍՐԱԹՅԱՆ Մուրադ Մարգարի**
ճարտարապետության թեկնածու
**ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Էմմա Պապինի**

Առաջատար կազմակերպություն՝ Ալ. Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2020թ. նոյեմբերի 12-ին ժամը 14:00-ին, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի 016 Արվեստագիտության մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ ք. Երևան, 0019, Մարշալ Բաղրամյան պողոտա 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020 թ. հոկտեմբերի 2-ին:
Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ **Ասատրյան Ա. Գ.**

---

Тема диссертации утверждена в Институте искусств НАН РА.

Научный руководитель – доктор архитектуры, профессор
**КЕРТМЕНДЖЯН Давид Григорьевич**

Официальные оппоненты – член-корреспондент НАН РА,
доктор архитектуры, профессор
**АСРАТЯН Мурад Маргарович**
кандитат архитекуры
**АРУТЮНЯН Эмма Папиновна**

Ведушая организация – Национальный музей-институт архитектуры имени А.Таманяна

Защита диссертации состоится 12-го ноября 2020г. в 14:00 часов на заседании специализированного совета 016 Искусствоведение ВАК РА, действуюшего в Институте искусств НАН РА (адрес: Ереван, 0019, проспект Маршала Баграмяна 24/4).

С диссертацией можно ознакомиться в библотеке Института искусства НАН РА.
Автореферат разослан 2-го октября 2020г.

Ученый секретарь специализированного совета,
доктор искусствоведения, профессор **Асатрян А. Г.**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ներկայացվող աշխատությունը նվիրված է ԻԻՀ մայրաքաղաք Թեհրանի թատերական շենքերի ճարտարապետության զարգացման ուսումնասիրությանը՝ տարածաշրջանի հայկական թատրոնների համեմատության համատեքստում, որտեղ կողք-կողքի ներկայացվում են Կ. Պոլսի, Երևանի, Թբիլիսիի ու Բաքվի թատրոնները՝ 19-րդ դարավերջից 20-րդ դարասկիզբն ընկած ժամանակահատվածում: Հայտնի է, որ իրանյան թատերական շենքերը համաշխարհային արվեստի և տարածաշրջանի ավանդական ճարտարապետության կարևոր մասն են կազմում, հետևաբար ունեն ավանդական արժատներ՝ հանդես գալով որպես համաշխարհային և տեղական ազգային ավանդականի ինքնօրինակ խառնուրդ: Աշխատության մեջ դիտարկվում են Իրանի և տարածաշրջանի բնակավայրերում գտնվող թատրոնները, դրանց հորինվածքն ու ոճը, պարսկական ու իսլամական, արևելյան, ռուսական ու եվրոպական տարրերը, ինչպես նաև՝ բուն ազգային տեղական և հայկական գաղթավայրային առանձնահատկությունները:

***Թեմայի արդիականությունը.*** Թատերական շենքի ճարտարապետությունը դա մշակութային հասկացություն է, որը ոչ միայն արտացոլում է ուսումնասիրվող երկրի առանձնահատկությունները. այն ըստ էության տարածաշրջանային ու միջազգային փոխհարաբերությունների արդյունք է: Թեհրանի թատերական շենքերը իրանական քաղաքների ներքին կյանքի ու մշակույթի անդրադարձնող հայելին է, որոնք հարկավոր է ուսումնասիրել և՛ պատմականորեն, և՛ ներկայիս իրավիճակի լույսի տակ: Ներկայիս իրավիճակն այն է, որ Թեհրանում հատկապես կա թատերական կյանքի զարթոնք, ուստի անհրաժեշտ է ստեղծել ժառանգորդականը, որպեսզի հնարավոր լինի ստեղծել նորը և ժամանակակիցը: Սա նշանակում է, որ Թեհրանի թատրոնների պատմական ու ճարտարապետական առանձնահատկությունների ուսումնասիրությունն այսօր անհետաձգելի անհրաժեշտություն է. այն և՛ միջազգային, և՛ տեղական կատեգորիա է, որովհետև թատրոն և թատերական շենքի ստեղծումը հենց դա է պահանջում:

Թեհրանի թատրոնների ուսումնասիրության մյուս կարևոր հանգամանքը Իրանի նոր շրջանի արդի տասնամյակների բազմազգ բովանդակությունն է, որտեղ գեղարվեստի, ճարտարապետության, երաժշտության ու թատրոնի բնագավառներում հայկական համայնքի դերն ակնհայտ է: Կարճ արտահայտված, Թեհրանի թատրոնների ճարտարապետության մեջ կարևոր է հայկական համայնքի ներկայությամբ ստեղծված փոխազդեցությունները: Հետևաբար, վերոհիշյալ ակտուալության կողքին մեծ կարևորություն ունի հայկական թատրոնների այցելությունները Թեհրանի, Թուրքիայի, Վրաստանի, Ադրբեջանի տարածքներում նույնպես: Սա, փաստորեն, Թեհրանի թատրոններին ճարտարապետական յուրահատուկ երանգ հաղորդեց: Փաստորեն, հայկական թատրոնի ճարտարապետական յուրահատկությունները կամա-ակամա ներթափանցել են նշված քաղաքներ և Իրանի մայրաքաղաքի թատերական արվեստում ու շենքերում: Իրականությունն այն է, որ Թեհրանի թատերական շենքերի արվեստի ուսումնասիրությունն առանց հայկական փոքրամասնությունների գործունեության ուսումնասիրության՝ բարոյական ու նյութական տվյալներով հանդերձ, թերի կլիներ: Դա է անհրաժեշտությունը, որ ներկա ուսումնասիրությունն իր դրույթներով, հիմնվում է նաև հայկական համայնքային թատրոնների տվյալների վրա, որը, ի դեպ, մեր կարծիքով, Թեհրանի թատրոնների հաստատության մի մասն է՝ համադրված եվրոպական ու

տեղական իրականության հետ: Այսպիսով, թեմայի արդիականության տեսանկյունից ուշարժան է այն հանգամանքը, որ առաջին անգամ, Թեհրանի թատրոնների հետ կողք-կողքի ուսումնասիրության են ենթարկվում Երևանի, Թբիլիսիի, Բաքվի թատերական շենքերը:

***Ուսումնասիրության ժամանակագրական և աշխարհագրական սահմանները*** հիմնականում ընդգրկում են Թեհրան քաղաքը: Ուսումնասիրվող շինությունները կառուցվել են հենց այստեղ՝ անցած 130 տարիների ընթացքում: Զուգահեռների անցկացման էքսկուրսներում ընդգրկվել են անտիկ աշխարհի, միջնադարյան, վերածննդի ժամանակաշրջանի թատերական շենքերի, ինչպես նաև՝ անգլիական, ռուսական, ֆրանսիական, գերմանական, իտալական, հայկական, այդ թվում՝ Երևանում, Բաքվում, Կ.Պոլսում, Թբիլիսիում կառուցված հայկական թատերական շենքերը և համաշխարհային մի շարք այլ օրինակներ:

***Ուսումնասիրության նպատակն*** է Թեհրանում կառուցված թատրոնների ճարտարապետության վերլուծական - մեթոդական ուսումնասիրությանը:

***Հետազոտության գիտական խնդիրներն են Թեհրանում գտնվող թատերական շենքերի՝*** ցուցակագրումը, ճարտարապետական փաստագրումը, տիպաբանական զարգացման ներկայացումը՝ միջազգային զուգահեռների համեմատական ուսումնասիրությամբ, ճարտարապետական հորինվածքի և ոճական բնութագրիչ հատկանիշների վերլուծական ուսումնասիրությունը, հիմնական տեխնոլոգիաների և ճարտարապետական մանրամասների վերլուծությունը, տարածքային փոխազդեցությունների դերի լուսաբանումը՝ ի դեմս հայկական համայնքի գործունեության՝ Թեհրանում և մի շարք հայկական բնակավայրերում (Թավրիզ, Ջուղա, Երևան, Բաքու, Կ.Պոլիս, Թբիլիսի և այլն):

***Ուսումնասիրության մեթոդաբանությունը.*** Թեհրանում առկա թատերական շենքերի փաստագրական վերլուծությունը և որակական գիտահետազոտումը, համեմատական ուսումնասիրությունն ըստ տեսական և միջազգային զուգահեռների՝ ներառյալ պատմական հետազոտությունն ու իրավիճակը: *1.Գրադարանային նյութերի ուսումնասիրություն*՝ տվյալների բազայի ձևավորում: *2.Դաշտային ուսումնասիրություն (լուսանկարում և քարտեզագրում).* Դաշտային/տեղային ուսումնասիրությունը ներառում է տվյալների հավաքագրումը փորձարարական դաշտից դուրս: Կատարվել է այցելություն հետազոտվող տարածքներ: 3.*Շենքերի արխիվային նյութերի ուսումնասիրություն:* Այսպիսով՝ մեթոդաբանորեն և մասնագիտորեն վերանայվել են իրանական թատերական շենքերի բոլոր պայմանները, կատարվել են առանձնահատկությունների բնութագրումները: Իրանում առկա թատրոնների շենքերի դասակարգումն ու վիճակի արդիականացումը կնպաստի վերջիններիս ավելի լավ ընկալմանը՝ ներկա հանգամանքների լույսի ներքո:

***Ուսումնասիրության նորույթը*** հանդիսանում է Թեհրանի թատերական շենքերի մեթոդաբանորեն կատարված առաջին ճարտարապետական հետազոտությունը: Առաջին անգամ լինելով կատարվել է Թեհրանի թատերական շենքերի՝

ա. հատակագծային-տարածական դասակարգում,

բ. էքստերիերի և ինտերիերի փոխադարձ կապի հորինվածքային վերլուծությունը.

գ. ոճական առանձնահատկությունների ուսումնասիրություն,

դ. հայկական համայնքի բերած նորույթի բացահայտումը՝ սահմանված տարածաշրջանի

գաղթավայրերի թատերական շենքերի օրինակներով:

Աշխատությունը լիովին համեմատական և վերլուծական սկզբունքով է, հաճախ են միջազգային համապատասխան թատերական շենքերի հետ զուգահեռումները: Ուսումնասիրությունը Թեհրան քաղաքի թատերական շենքերն ուսումնասիրում է մեթոդական կտրվածքով և պարզաբանում է դրանց բոլոր նախագծային ասպեկտները:

***Արդյունքների փորձաքննությունը.*** Ուսումնասիրությունն անհրաժեշտ է Թեհրան քաղաքի հասարակական շենքերով զբաղվող պետական ու մասնավոր կառույցների, թեմայով զբաղվող անհատ ուսումնասիրողների համար: Արդյունքները հնարավոր է ներդնել վերանորոգումների, վերականգնումների և այլ ճարտարապետական գործնականում կիրառելի նախագծերում, նաև՝ ճարտարապետության տեսության ու պատմության, հասարակական շենքերի և դրանց գործառույթների ուսումնասիրության ոլորտում: Ատենախոսության դրույթները հրատարակվել են հոդվածների ձևով (ԻԻՀ-ում, ՀՀ-ում, ՌԴ-ում), իսկ ուսումնասիրության հիմնական հայեցակարգերը ներկայացվել են գիտական նստաշրջաններում (ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում):

**Ատենախոսության կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, նկարացանկից, ինչպես նաև՝ աղյուսակներ և 264 լուսանկար պարունակող հավելվածից:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, նշված են նպատակն ու խնդիրները, գիտական մշակվածության աստիճանը, ներկայացված է գրականության տեսությունը, շեշտված է աշխատության գիտական նորույթը: Եզրակացություններում կատարվում է թեմայի ընդհանրացում:

## ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ
## ԹԱՏԵՐԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԱԿՆԱՐԿ

Առաջին գլխում ընդհանուր գծերով անդրադարձ է կատարվում թատրոնի 2500 տարվա պատմական էվոլյուցիային՝ անտիկ թատրոնի սկզբնավորումից մինչև ժամանակակից թատերաշինության նվաճումները: Տրվում են ընդհանուր տեղեկություններ ինչպես Թեհրանի թատերական շենքերի, այնպես էլ՝ միջազգային օրինակների, համաշխարհային ճարտարապետության չափանիշների վերաբերյալ: Համառոտ կերպով տրվում է թատրոնի շենքերի հիմնական ֆունկցիոնալ տարրերի բացատրությունը:

Հայտնի է, որ թատրոնի սկզբնավորումն ու զարգացումը կապվում է դեռևս Հին Հունաստանի ու Հին Հռոմի հետ: Հունական թատրոնի շենքերը կոչվում էին Թեատրոն (*theatron), այսինքն*՝ «տեսարանների վայր», որոնք ընդարձակ, բացօթյա շինություններ էին՝ կառուցված լեռների լանջերին, բաղկացած երեք հիմնական տարրերից՝ օրկեստրա, բեմ և հանդիսատես, ընդ որում՝ *պրոսկենիում*՝ խորքային բեմով, որը հանդիսանում է ժամանակակից պրոսկենիումի նախատիպը: Հունական թատրոնը չափերով հսկայական էր: Այստեղ եղել են նաև ծածկած փոքր թատրոններ՝ *օդեոններ*, որոնց թվում

ամենահինը Աթենքի օդեոնն էր: Հռոմեական թատրոնն ըստ էության կրկնօրինակել է հունական թատրոնի կառուցվածքային ոճը, այն տարբերությամբ, որ հանդիսատեսի տեղերը կառուցում էին արհեստական թեքության վրա կամարակապ կրող կոնստրուկցիաների միջոցով: Հունականին նման լինելով հանդերձ, հռոմեական թատրոնն այնուամենայնիվ ունեցել է իրեն բնորոշ հատկանիշները: Ինչ վերաբերում է հռոմեական ամֆիթատրոնին, ապա այն շրջապատող եզրապատը և ամֆիթատրոնի շարքերը եկել, միացել են սքենայի թիկունքին՝ հարուստ ճարտարապետությամբ մշակված պատի հետ, որի շնորհիվ բեմական մասը, դիտասրահի հետ միասին, դարձել է մի ամբողջություն: Իսկ երբ հետագայում ամֆիթատրոնը եզրափակող պատի բարձրությունը մեծանում է, հռոմեական թատրոնի կառուցվածքը մոտենում է ծածկված թատրոնի տիպին:[1] Հռոմեական ծածկված թատրոնները եղել են նույնքան տարածված, որքան և բաց թատրոնները, ինչպես օրինակ՝ Պոմպեյի բաց և ծածկած թատրոնները կառուցվել են միմյանց հարակից: *Կոլիզեյը* Հռոմի դասական շենքերից ամենանշանակալիցն է, այն կառուցված առաջին մշտական ամֆիթատրոնն է համարվում և ամենաստպավորիչ դասական արենան աշխարհում:

Փաստորեն, անտիկ թատրոնը ճարտարապետահատակագծային, օպտիկական ու ակուստիկական տեսակետից լուծվել է բարձր մակարդակով, դրանք հասել են իրենց փառքին և այդ գործընթացը շարունակվել է մինչև միջնադար, որից հետո թատրոնների գործունեությունը սկսում է պասսիվանալ: 7-րդ դարից վերազարթոնք է նկատվում թատրոնի նկատմամբ. եկեղեցիներում, հրապարակներում, հյուրանոցների բակերում ներկայացումներ են կազմակերպվում, ուր փայտե տախտակամածներն աստիճանաբար փոխարինվում են կազմավորված բեմահարթակներով: Վերածննդի դարաշրջանի գալստյամբ, կրկին վերազարթոնք է սկսվում թատերական արվեստի բնագավառում՝ նշանավորվելով ճարտարապետական բարձր զարգացմամբ ու էվոլյուցիայով: Իտալիայում կառուցվում է Եվրոպայի առաջին ծածկված թատրոնի շենքը (Վիչենցա քաղաքի *դա Օլիմպիկո ակադեմիական թատրոն*, 1580թ., ճարտ. Ա. Պալադիո): 17-րդ դարի սկզբներից թատրոններն արդեն հանդես են գալիս այնպիսի տեսքով, ինչպես որ այսօր են, այսինքն՝ բեմն անջատված հանդիսատեսից՝ պրոսկենիումի կամարով կամ շրջանակով: *Այս ժամանակաշրջանը ընդունված է համարել նոր տիպի թատրոնի սկզբնավորման շրջան՝ ի դեմս յարուսային կամ դասային թատրոնների: Հենց 17-րդ դարի սկզբներին էր, երբ անտիկ թատրոնի սկզբունքներից հեռացումն ակնհայտ է դառնում:* Ուշ միջնադարում արդեն իտալական թատերաշինության մեջ դիտադահլիճի կատարելագործման որոնումները հանգեցնում են հատած էլիպսաձև կամ պայտաձև հատակագծային հորինվածքին (Հռոմի Տորդինո թատրոնի շենքը, 1675թ., ճարտ. Կառլո Ֆոնտանա), որը լավ մոդել հանդիսացավ շենքերի հետագա վերափոխման համար: Այլ խոսքով՝ թատերական բոլոր ժանրերի պահանջները բավարարող իտալական թատրոնն իր դիտելիության ու լսելիության բարձր մակարդակով, կատարելագործված բեմով ու տեխնիկայով շուտով դուրս է գալիս իտալական ազգային շրջանակներից ու լայն տարածում գտնում արևմտյան Եվրոպայում՝ նպաստելով համաշխարհային թատերական արվեստի ու թատրոնի ճարտարապետության զարգացմանը: *Անշուշտ, թատրոնի շենքերի զարգացումը տարբեր երկրներում կատարվում է տարբեր կերպ:*

[1] Roderick, Ham AAdipl Riba, Theater Planning, The architectural press, London 1974, P. 98-99

*Շրջանաձև բեմերը, խորքային շրջանակով բեմերը և պտտվող՝ տրյումային բեմերը ժամանակի ընթացքում դառնում են եվրոպական դիզայներների նվաճումները:*

16-րդ դարում *Ֆրանսիայում* թատերական շենքերի դահլիճները կառուցվում էին պալատներին կից, ուղղանկյուն հատակագծով: Թատերական ճարտարապետության գլուխգործոցը համարվում է Փարիզի «Գրանդ օպերայի» շենքը՝ իր օվալաձև դիտադահլիճով, լայն բեմական բացվածքով, ուրույն հատակագծատարածական ու հորինվածքային հատկանիշներով: Նշելի է, որ *Անգլիայում, Ավստրիայում, Իսպանիայում* թատրոնի զարգացման ուղիները մոտավորապես հիշեցնում են իտալականի ու ֆրանսիականի անցած ուղին: *Եղիսաբեթյան ժամանակաշրջանի Անգլիայում* թատերական շենքերի ճարտարապետության զարգացման ընթացքին վեր են խոյանում Ռոուզ (1587թ.) և Գլոբուս (1599թ.) թատրոնները: 19-րդ դարում գերմանացի ճարտարապետ Գ. Զեմպերի հեղինակած *Ռիչարդ Վագների* թատրոնի օրինակով փաստվում է, որ գերմանացի ճարտարապետները հեռանում են թատրոնի շենքերում միօրինակություն ստեղծող դասական (իտալական) թատրոնի տիպից ու հիմք դնում նոր տիպի թատրոնի շենքին: Ուշարժան են Մ. Ռոսսիի նախագծով կառուցված նախկին Ալեքսանդրյան, ներկայումս՝ Պուշկինի անվան դրամատիկական թատրոնի շենքը (1827-1832թթ.), որը իտալականի ու ֆրանսիականի կրկնություն է: *Օպերայի ու Բալետի Մեծ Թատրոնը* Մոսկվայում (1821-1825թթ., ճարտ. Օ. Բովե)՝ եվրոպայի լավագույն թատրոնների շարքում է:

Ինչ վերաբերում է *ժամանակակից թատրոններին,* ապա դրանք հաճախ ոչ ավանդական են, ինչպիսիք են հարմարեցվող տարածքները կամ այնպիսի թատրոնները, որտեղ հանդիսատեսը և դերասանները առանձնացված չեն (*մոդուլային թատրոնի* օրինակ՝ Ուոլթ Դիսնեյի): Ուշագրավ է նաև *Սիդնեյի Օպերան* Ավստրալիայում, որը կատարողական արվեստի բազմաֆունկցիոնալ կենտրոն է:

*Իրանական թատրոնը* ևս հին պատմություն ունի: Ծիսական տոնակատարությունները և ներկայացումներն այստեղ եղել են բացօթյա, ինչպես նաև տաճարների ներսում: Իրանի թատրոնի զարգացման ընթացքի ուսումնասիրությամբ, մասնավորապես՝ մայրաքաղաք Թեհրանի, ակնհայտորեն երևում են օտարամուտ ճարտարապետական տարրերի ներթափանցումը երկիր: [2] Ներկայացումները բեմադրվում էին թագավորի համար պալատում, ազնվականների համար՝ տներում, ինչպես նաև սրճարաններում՝ հանրության համար: Դրանք բեմադրվում էին քառակուսի տարածքում, իսկ հանդիսատեսը նստում էր շուրջը: Օտարամուտ տարրերի ներմուծումից հետո բեմական տարածքները փոխվում են, բեմը դառնում է երկկողմ և եռակողմ. այս պարագայում տեսանելի է դառնում եվրոպական թատրոնի ազդեցությունը իրանական թատրոնի վրա: Ժամանակին, հարմարություններով հագեցած, ամենագեղեցիկ թատրոնները Թեհրանում *Թեքիեհ Դովլաթն էր*՝ վաղ հունական և հռոմեական թատրոնների շենքերին բնորոշ նմանություններով և *Դարոլ Ֆոնունը*՝ իտալական ոճով: Տարիների ընթացքին թատրոնի կառուցումը Թեհրանում զերծ չի մնում վերափոխումներից, որոնք կատարվել են երբեմն ակնհայտ օտարամուտ ճարտարապետաոճական տարրերով: Փաստորեն, արդեն 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարում տարբեր երկրներում կառուցված թատերական շենքերը

[2]Kamyabi, A., Talaso, A., Abdi, F., Persian theatre, Bidgol pub., 2012, P.58 (պարսկերեն)

ճարտարապետագեղարվեստական տեսանկյունից դրսևորվում են յուրատիպ և նոր որակական հատկանիշներով:

*Թատերական շենքերի հիմնական ֆունկցիոնալ տարրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ* քաղաքների կառուցապատման համատեքստում թատերական շենքերը կանգնեցվել են հրապարակներում, զբոսայգիներում, կղզիաձև միջավայրերում՝ բավարարելով այնպիսի պահանջներ, ինչպիսիք են տարհանման, տրանսպորտային խնդիրները, կանաչապատման հարցերը, սպասարկման հարմարությունները, բացօթյա սպասատեղիները և այլն: *Թատերական շենքերի հիմնական ֆունկցիոնալ տարրերի թվում են՝ հանդիսատեսային ու բեմական կոմպլեքսները, ինչպես և՝ բեմը սպասարկող ու վարչատնտեսական մասերը:*

Նշելի է, որ թատրոնի շենքի ճարտարապետագեղարվեստական կերպարը ելնում է ոչ միայն շենքի ֆունկցիոնալ պրոցեսից ու հիմնական բովանդակությունից, այլև տեխնոլոգիական ու կոնստրուկտիվ սխեմաների բնույթից: Ինչ վերաբերում է թատրոնի շենքի ներքին ճարտարապետական խնդիրներին, ապա նախասրահի ու հանդերձասրահների ծավալների մշակումը հարկ է իրականացնել համեստ՝ համապատասխան նրանց ֆունկցիոնալ նշանակությանը՝ հանդիսատեսի՝ դեպի թատրոն ելք ու մուտքի համար հարմարավետ: Դրանց զուսպ ճարտարապետությունը կոնտրաստի միջոցով էլ ավելի է ընդգծում հաջորդող ճեմասրահը (սպասասրահ) ու կուլուարները, ուր ի տարբերություն վերոնշվածների, հանդիսատեսն առավել երկար ժամանակ է անցկացնում: Ուստի դրա, ինչպես նաև՝ յարուսների (պատշգամբների) ճարտարապետագեղարվեստական մշակումները պետք է ստեղծեն հանդիսավորության տրամադրություն ու տպավորություն, իսկ սպասասրահին կից օժանդակ սենյակները (զուգարան, ծխարան, սրճարան, բար և այլն), հարկ է լուծել առավել համեստ ու դրանց նշանակությանը համապատասխան հարդարմամբ:

Բոլոր պարագաներում, առավել կարևոր է դիտադահլիճի ճարտարապետությունը, որը մասնավորաբար կախված է դրա հատակագծատարածական լուծումից. ըստ էության, այն թատրոնի մուտքից սկսվող տեղաշարժման ու տպավորությունների ավարտն է, որի ճարտարապետական ձևակերտումը, հարմարությունները, այդ թվում՝ լույսը, լսելիությունը, օդափոխությունը, կահավորանքը և այլն, պետք է այնպես իրականացվեն, որպեսզի ծառայեն այցելու հանդիսատեսին՝ ստեղծելով այն անհրաժեշտ տպավորությունը, որը կնպաստի նրանց հանգստին ու լավ կանդրադառնա նրանց տրամադրության վրա: Թատերական շենքերի ֆունկցիոնալ տարրերի թվում առավել բարդ տարրը բեմն է: *Ժամանակակից թատրոնների հատուկ նախագծերը ներառում են խորքային բեմը, եռակողմ բեմը, սև արկղերի տեսակի բեմը, շրջանաձև թատրոնը, ամֆիթատրոնն ու արենան:*

## ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ
## ՀԱՅԵՐԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՎԱՆԴԸ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԹԱՏԵՐԱՐՎԵՍՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՋ ԹԵՀՐԱՆՈՒՄ, ԹԲԻԼԻՍԻՈՒՄ, ԲԱՔՎՈՒՄ, Կ.ՊՈԼՍՈՒՄ, ԵՐԵՎԱՆՈՒՄ

Երկրորդ գլխում ներկայացվում է հայ համայնքի ներդրած ավանդը թատերարվեստի ու թատերաշինության զարգացման ոլորտներում, ինչպես Թեհրանում, այնպես էլ՝ տարածաշրջանի բնակավայրեր Երևանում, Թբիլիսիում, Բաքվում, Կ.Պոլսում:

Հայտնի փաստ է, որ հայերը միշտ ունեցել են թատրոն, բայց թե ինչպիսին է եղել հայկական թատրոնի ճարտարապետությունը հնում դժվար է հստակ ասել, քանի որ դրանցից ոչ մեկը չի պահպանվել ցայսօր: Ուշարժան *է թատերարվեստի ու թատերական շենքերի զարգացման հետազոտությունը հայկական թատրոնի պատմության ուսումնասիրության համատեքստում արդեն 19-20-րդ դարերի ժամանակամիջոցում, ինչպես Հայաստանի տարածքում, այնպես էլ Իրանի, Թուրքիայի, Վրաստանի, Ադրբեջանի* հայկական գաղթավայրերում, որի պատկառելի մասն է կազմում նաև իրանահայությունը:

**Իրանի հայկական թատրոնները.** Հայերը Իրանում կառուցել են մի շարք դահլիճներ՝ թատերական ներկայացումների և մշակութային այլ միջոցառումների իրականացման համար բոլոր այն իրանական քաղաքներում, ուր նրանք հաստատվել ու ապրել են, այդ թվում՝ *Թեհրանում, Թավրիզում, Ջուղայում, Ռաշտում*: Ընդհանրապես Իրանում թատրոնի ստեղծման պատճառները պետք է ուսումնասիրել սոցիալական ու մշակութային գործոնների տեսանկյունից, սկսյալ իրանցի ճանապարհորդների այցելություններից դեպի Եվրոպա, ինչպես նաև՝ Հայաստանից ու Կովկասից թատերական պատվիրակությունների ճամփորդությունները դեպի Իրան:

Իրանի հայկական թատրոնը հարյուրամյակների պատմություն ունի: Առաջին հայկական ներկայացումը *Թավրիզում* տեղի է ունեցել 1879 թ.-ին: 1900 թ. այստեղ երկու մեծ թաղամասերում ձևավորվել է թատերասեր հասարակայնության համայնք: 1914-1915թթ. Թավրիզում կառուցվում է Արամյան թատրոնի դահլիճը: 1920-1924 թթ. Հայաստանից ու կովկասյան տարբեր բնակավայրերից թատերական խմբեր են հրավիրվել Թավրիզ՝ ներկայացումներ խաղալու համար (ի դեմս Մ. Թաշճյանի, Մ.Մարությանի և այլոց): Դեռևս 1890թ.-ից թատրոններ են գործել նաև հայաբնակ *Ուրմիայում, Սալմաստում, Խոյում, Մարաղեհում, Արդեբիլում ու Ղարադաղում*: Առաջին հայկական թատրոնը *Սպահանում (Ջուղա)* սկսել է գործել 1888թ.-ից, որը մեծ դերակատարություն է ունեցել Ջուղայի հայկական համայնքի կյանքում: 1921-1925թթ. թատրոն էր գործում *Ռաշտում*: Գալով քաղաքամայր *Թեհրանին*, նշենք, որ առաջին թատերախումբն այստեղ ստեղծվել է 1881 թ.: Սկզբում ներկայացումները ցուցադրվել են տներում: 1884 թ. հայկական դպրոցում կառուցվում է մեծ դահլիճ: Թեհրանի թատերական կյանքի աշխուժացման համատեքստում անգնահատելի է Վարթու և Արտո Տերյան դերասանական ամուսնական զույգի ներդրումը (1930-ականներ): Հետագայում Թեհրանի հայերի թատերական գործունեությունը շարունակվել է խմբերի, ասոցիացիաների, հայկական ակումբների շրջանակներում, այդ թվում՝ «Արարատի» և «Սիփանի» ակումբները, Չարմահալի հայ համայնքի և այլն: Վերը բերված փաստերը վկայում են, որ թատերական լավագույն ավանդույթներ ունեցող հայ ժողովրդի իրանահայ հատվածը իր գործնական ավանդն է ունեցել իրանական թատրոնի զարգացման ասպարեզում:

19-րդ դարի 60-ականներից մինչև 20-րդ դարասկիզբն ընկած ժամանակամիջոցը նշանավորվում է որպես հայկական պրոֆեսիոնալ թատրոնի ստեղծման և թատերական շենքերի կառուցման ժամանակաշրջան, որը սկզբնապես լայնորեն տարածված էր բուն Հայաստանից դուրս, մասնավորաբար՝ Թբիլիսիի ու Բաքվի հայկական միջավայրում: Չնայած ճարտարապետության մեջ առկա տարբեր ոճերի գոյությանը, այդ թվում՝ *էկլեկտիկայի, մոդեռնի, նեոռուսական ու նեոդասական ուղղությունների* առկայությանը,

ճարտարապետների ստեղծագործություններում նկատվում է ձգտումը դեպի սեփական ազգային ճարտարապետական կերպարներն ու ավանդույթները, որն էլ մեծապես քաջալերվում էր վերոնշյալ բնակավայրերի հայ մեկենասների առատաձեռն աջակցությամբ:

**Հայկական թատրոնը Թբիլիսիում.** 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներին Թբիլիսին ներկայանում էր որպես յուրատիպ քաղաք, ուր սինթեզվել են հին ու ժամանակակից ճարտարապետությունն ու ցայսօր այնտեղ ապրող տարբեր ազգերի կենցաղային ավանդույթները: Դեռևս 19-րդ դարի կեսերին, մինչ էկլեկտիզմն ու մոդեռնը, Թբիլիսիի բնակելի ու հասարակական շենքերը կրում էին ռուսական կլասիցիզմի և արևմտյան դասականի ազդեցությունը: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ի թիվս մի շարք արժեքավոր շինությունների, կառուցվում են յոթը թատերական շենքեր, որոնցից առաջինը կառուցվել է 1846-1851թթ.՝ մեծահարուստ, հայազգի Գ. Թամամշյանի միջոցներով, Եվրոպայի թատերաշինական ավանդույթների համաձայն: Հատակագծում պայտաձև դիտադահլիճը օժտված էր պարտերով, պատշգամբներով, օթյակներով, խորքային տիպի բեմով: Դժբախտաբար, 1874թ. ծագած հրդեհը ոչնչացրել է այն: 1894թ. Թբիլիսիում կառուցվում է օպերային թատրոնի շենք՝ Վ. Շրեդերի նախագծով, որը ճարտարապետական հորինվածքի առումով մավրիտանական ոճով էր, և քննվող ժամանակաշրջանի Ռուսաստանում ընկալվում էր որպես արևելյան կամ ազգային ոճ: Թբիլիսիի թատերաշինության հոյակերտ կառույցներից է համարվում Կովկասյան արտիստական թատրոնը՝ ներկայիս Ռուսթավելու անվան դրամատիկական թատրոնի շենքը, որը կառուցվել է 1899թ. հայազգի մեկենասներ Հ.Փիթոյանի և Ա.Մանթաշյանի նյութական միջոցներով: 19-րդ դարակեսին Թբիլիսիում կառուցված մեկ այլ հիշատակության արժանի շենք է եղել Արծրունիների թատրոնը, որը հրդեհի հետևանքով այրվելուց հետո կրկին վեր է հառնում՝ շնորհիվ ճարտարապետ Ք. Տեր-Սարգսյանի: Ուշարժան է նաև 1914թ. ճարտարապետ Դ. Չիսլյանի կողմից կառուցված Հասարակական հավաքույթների կամ հետագայում վերանվանված «Փոքր թատրոնի» շենքը:

Հայ համայնքի գործունեությունն ու նպաստը Թբիլիսիում նշանավորվում է նաև ի դեմս *Զուբալովի թատրոնի* (1902-1910, ճարտարապետ Մ. Պ. Օհանջանյան-1870/72-1917): Թեև այս շինության մեջ նկատվում է էկլեկտիկայի ու մոդեռնի տարրեր, բայց և այնպես, ակնառու են ճարտարապետի ուրույն գեղարվեստական-գեղագիտական մոտեցումները՝ ոճաստեղծման ու կերպարաստեղծման անհատական ստեղծագործական մեկնաբանմամբ ու ֆասադների ինքնատիպ մշակմամբ: Շենքը կանգնեցվել է Քուռ գետի ձախափնյա հատվածում: Գործառնական զարգացումն ընթանում է երկայնական առանցքով՝ նախասրահ-ճեմասրահ-դիտադահլիճ-բեմ սխեմայով: Դիտադահլիճն այստեղ պարտերային տիպի է, պարագծային պատշգամբով: Թատրոնը չունի հանդիսավոր շքաստիճաններ, սենյակների շարք, չի փայլում շքեղությամբ: Ներսույթի ձևավորումն ու հարդարանքը նույնպես զուսպ են: Շենքի գլխավոր ճակատի ձևավորումը համեստ է: Այստեղ ճարտարապետության ոճական ուղղվածությունն արտահայտում է ուշ մոդեռնին բնորոշ գծերը: Կենտրոնի, առավել նվազ բարձրություն ունեցող աջ ու ձախ թևերի անկյուններն ընդգծված են փոքրաչափ գմբեթներով, որոնց միջոցով հավասարակշռվում է գլխավոր ճակատի ուրվագիծը: Կողային ճակատները զուրկ են դեկորատիվ միջոցներից: Ակնառու է, որ

ճարտարապետին հաջողվել է ծավալատարածական պարզ հորինվածքով ու համեստ արտահայտչամիջոցներով գտնել Զուբալովի թատրոնի գեղարվեստական կերպարը: Ըստ Թբիլիսիի քաղաքային արխիվի տվյալների, 1930-ից ի վեր այստեղ է տեղափոխվում Կ. Մարջանաշվիլու անվան դրամատիկական թատրոնը, մեկնարկում է շենքի վերակառուցման աշխատանքները, որի արդյունքում շենքը տարրալուծվում է նոր կցակառուցումների ծավալներում՝ կորցնելով իր նախկին տեսքը:

**Հայկական թատրոնը Բաքվում**. 19-րդ դարի վերջին ու 20-րդ դարի սկզբին Բաքուն համարվում էր հարուստ ու խոշոր քաղաք, թեև այն ավելի երիտասարդ է, քան Թբիլիսին և իհարկե՝ Երևանը: Ռուսաստանին միանալուց հետո Բաքվի քաղաքաշինական արվեստում նույնպես ի հայտ են գալիս էկլեկտիկան, մոդեռնը և նեոկլասիցիզմը, որոնք միանշանակորեն չեն ընդունվում ու հընթացս կերպափոխվելով՝ հարստանանում են տեղական երանգապնակով, որն առավել ցայտուն կերպով իր արտահայտությունը գտնում է ճարտարապետ Ն. Բաևի (1875-1949) նախագծով կառուցված *Մայիլյան եղբայրների թատրոնում*: Հատակագծի լուծումն իր ընդհանուր գծերով մոտ է 18-19-րդ դարերի եվրոպական թատրոնների տիպին՝ պայտաձև դիտադահլիճով: Դահլիճն ունի երկու յարուս, ամֆիթատրոն և պարտեր: Գլխավոր ֆասադին ու մուտքին կից տեղավորված միահարկ սյունազարդ ելուստը ուղղորդում է դեպի նախասրահն ու հանդերձարանները: Մուտքերը դեպի պարտեր, ամֆիթատրոն և պատշգամբները հարմարավետորեն են նախագծված: Նվագախմբի փոսորակն ու բեմն ունեն համեմատաբար մեծ չափեր և օժտված են բեմական տեխնիկայի միջոցներով: Շինության ֆասադներն արված են յուրօրինակ ու տպավորիչ արտահայտչամիջոցներով, որոնց կենտրոնական մասում քառասյուն ելուստի վրա Բաևը նախատեսել է աղեղնաձև կամարով ու հարուստ ձևավորված մեծ ապակեպատ բացվածք: Դրա աջ ու ձախ կողմերում բարձրանում են քառակուսի հատվածքով ու գմբեթներով ավարտված աշտարակաձև ելուստներ:[3] Դրանցից աջ ու ձախ կրկին տեղավորված են ապակեպատ բացվածքներ: Ճակատը երեսպատված է սպիտակ ցեմենտի ծեփվածքով ու շքեղ զարդաքանդակներով: Ճոխությամբ են ձևավորված նաև թատրոնի ներքին տարածությունները՝ նախասրահը, ճեմասրահը, դահլիճն ու կողասրահները: Այս ծավալուն շենքի շինարարությունն ավարտվում է ընդամենը 9-ը ամսում: Այսօր թատրոնը վերանվանվել է *Ադրբեջանի օպերայի ու բալետի պետական ակադեմիական թատրոն*-ի:

Ակնառու է, որ գեղարվեստագեղագիտական բնութագրով Թբիլիսիի, ինչպես և Բաքվի ճարտարապետությունը բազմառճ է, որն անշուշտ պայմանավորված է որոշակի պատմական իրավիճակով:

**Երևանի թատերական շենքերը.** Այս շրջանի Երևանի ճարտարապետությունը համարվում է վերջինիս պատմության ամենահետաքրքիր մասերից մեկը, հատկապես, որ այն համընկնում է Հայաստանի՝ պարսկական լծից ազատագրվելու և ռուսական կայսրությանը միանալու ժամանակահատվածի հետ: Ժամանակափուլին բնորոշ են ավանդույթների կտրուկ փոփոխությունները՝ պայմանավորված հյուսիսից ու արևմուտքից ներթափանցած ճարտարապետական ուղղություններով՝ ի դեմս *էկլեկտիկայի, մոդեռնի ու նեոկլասիցիզմի:*

---

[3]Տիգրանյան Է., Հայ ճարտարապետների գործունեությունը Անդրկովկասում, Եր., 2000, էջ 211-212

Թատերարվեստի ու թատերական շենքերի ճարտարապետության զարգացման նոր փուլը Հայաստանում սկսվում է խորհրդային իշխանության հաստատմամբ: Առաջին և հաջողված քայլն այս ուղղությամբ կատարել է Ա. Թամանյանը (1878-1936)՝ ի դեմս *Երևանի պետական օպերայի ու բալետի շենքի*՝ արարելով նոր թատրոնի ստեղծման ընդհանուր գաղափարն ու կոմպոզիցիան, որի նորարարությունը ռեալիստական է՝ շաղկապված բարդ խնդիրների համալիր լուծման հետ: Պահպանելով երկդահլիճ գաղափարը՝ ընդհանուր բեմի հետ, հընթացս բարելավելով նախագիծը, ճարտարապետը ձգտել է հասնել պարզության ու լակոնիկության: Ծավալատարածական հորինվածքն ունի եռայարուս լուծում, որոնք ավարտվում են բեմական տուփի ծավալով, որը բեմի եռամաս նախագծման արդյունքում ունի ձգված ութանկյունի ձև՝ կարճ ուղղահայաց ելուստներով դեպի անկյունները: Շնորհիվ ծավալների համաչափության ու համամասնությունների, ֆասադների մշակման, աստիճանական ուրվագծման, ամբողջ ծավալային հորինվածքը առանձնանում է դինամիկությամբ ու թեթևությամբ: Հատակագիծը պարզ է ու լակոնիկ, ինչպես՝ ծավալային հորինվածքը: Սա երկու՝ ամառային ու ձմեռային թատրոնների համադրություն է: Երկու մուտքային հանգույցները՝ ընդարձակ նախասրահներով ու հանդերձասրահներով, տեղակայված են սպասասրահում և մասամբ՝ ամֆիթատրոնի տակ: Հեռանալով դասային թատրոնի բազմայարուսային դիտադահլիճի ու խորքային բեմով սխեմայից, Թամանյանը նախատեսում է միայն մեկական պատշգամբ ամեն մի դահլիճում, փոխարենը զարգացնելով ամֆիթատրոնները: Կենտրոնական բեմի հետ ստեղծվում է հինգ խաղահարթակ ունեցող բեմական համակարգ: Դիտադահլիճների կիսակլոր ձևը լայն բացվածքով հակված են դեպի խորքային բեմը և կիսաշրջանաձև օրկեստրային փոսորակը ամֆիթատրոնի հետ վերցված, ինչ-որ կերպ հիշեցնում են անտիկ թատրոնը: Ըստ Թամանյանի նախագծի՝ ենթադրվում էր բեմի ու դիտադահլիճների մի շարք տրանսֆորմացիաներ, որոնք տեղի չէր ունենում: Նկատելի է, որ թատրոնի հորինվածքի տարածական լուծման մեջ Թամանյանը նաև դիմել է ռուսական դասականության փորձին: Ֆասադների ճարտարապետության մեջ, պլաստիկ դեկորատիվ միջոցների առումով, նա կիրառում է բաց մոխրագույն հայկական գրանիտը: Շենքը տեղակայված է Հյուսիսային պողոտայի հետ նույն գծի վրա, և ասես դրա հորինվածքային սխեմայի ավարտուն մասը կազմի: Վերջերս, թատրոնի հրապարակում, կառուցվել է եռահարկ ավտոկայանատեղի:

Գ. *Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնը* հիմնադրվել է 1922 թ. և համարվում է ՀՀ ամենահին և ժամանակակից թատրոնը: Շնորհիվ ճարտարապետ Ռ. Բ. Ալավերդյանի (1916-1968) ջանքերի, թատրոնը վերակառուցվել է: Շենքի հատակագծային լուծումն ասիմետրիկ է: Նախագծով նախատեսվել է 1250 տեղերով հանդիսասրահ՝ հատվածավորված ձևով, որը մասամբ լուծվում է պարտերի, մասամբ էլ՝ ամֆիթատրոնի կողմից: Վերջինի վերևամասում նախատեսվել է պատշգամբ՝ կողային անցումների սահուն շրջադարձով, որոնք ուղղված են բեմական պորտալին: Իսկ դրանց տակ տեղադրվել են կողային օթյակները: Այստեղ կանգնեցվում է պարզորոշ բեմ՝ պտտվող հարթակով: Գլխավոր ֆասադին բնորոշ է հին և նոր շինանյութերի՝ քարի և ապակու նուրբ համադրությունը: Շենքի ճարտարապետությունը դիտարկելիս, ակնառու է, որ այստեղ ներդաշնակորեն գործում են շենքի ֆունկցիան, կոնստրուկցիան և գեղարվեստական արտահայտչամիջոցները: Շենքն աչքի չի ընկնում

ներսույթի հարդարմամբ: Թատերական ներկայացումների ժամանակ օգտագործվում է նաև բեմի տրիումֆը (սկավառակը): *Black Box* կամ «Սև արկղ»՝ այսպես է կոչվում թատրոնի նոր, յուրօրինակ բեմահարթակը, որը միակն է Հայաստանի թատրոնների թվում:

*Այսպիսով՝ 20-րդ դարի 20-70-ականներին թատերաշինարարությունը Հայաստանում ապրել է նշանակալի վերելք, մշակվել են թատերական շենքերի բազմաթիվ նախագծեր, որոնցում իրենց արտահայտությունն են գտել տիպիկ հայկական ազգային ինքնատիպությունն ու կոլորիտը՝ և՛ ֆասադային լուծումների, և՛ հատակագծային ստրուկտուրայի, կոմպոզիցիայի ստեղծման և այլ հարցերում:*

**Հայկական թատրոնը Թուրքիայում**. 19-րդ դարի 60-70-ական թթ. ստեղծագործական վերելք է ապրել նաև Կ. Պոլսի հայ թատրոնը: Օսմանյան Թուրքիայում 1850-ականներին թուրքերեն լեզվով առաջին թատերական ներկայացումները կազմակերպել են հայկական համայնքի ներկայացուցիչները Կ.Պոլսում, Իզմիրում, Տրապիզոնում, Օրտուում, Սամսոնում և այլուր: Մայրաքաղաք Կ.Պոլսում ամենանշանավորը Հ. Վարդովյանի թատերախումբն էր՝ «*Օսմանյան թատրոն*»-ը (1861-1877թթ.), որի դերասանների մեծագույն մասը հայեր էին: Իր ավանդն ունի նաև Տ. Չուխաճյանը, ով ժամանակին «*Արևելյան թատրոն*»-ի երաժշտական մասի ղեկավարն էր: Թուրքիայում թատրոնի զարգացման ճանապարհին կարևոր ներդրում են ունեցել «*Վասպուրական*» թատրոնը, «*Օսմանյան դրամատիկ թատերախումբը*» (1885-1914 թթ.)՝ Մ. Մնակյանի ղեկավարությամբ, Հ. Գասպարյանի «*Արամյան թատրոն*»-ը (1846-1866 թթ.), որը պահպանել է հին հայկական թատրոնի ավանդույթները: 1860-ականներին Կոստանդնուպոլսում և Թիֆլիսում հանդես եկող հայկական սիրողական թատերախմբերը վերածվում են պրոֆեսիոնալ հայկական թատրոնների՝ գրանցելով հսկայական ավանդ: Դժբախտաբար, 1870-ական թվականների վերջերին թուրքական կառավարությունը Պոլսից վտարում է հայկական թատրոնները: Այդ նույն ժամանակամիջոցին է, որ Պոլսից Անդրկովկաս են տեղափոխվում բազմաթիվ հայ դերասաններ, որոնք շարունակում են գործել Երևանում, Թբիլիսիում ու Բաքվում:

Այսպիսով՝ հայկական համայնքի բերած ավանդը թատերական շենքերի ու թատերարվեստի զարգացման ոլորտում ինչպես Իրանում, այնպես էլ՝ Թուրքիայում, Վրաստանում, Ադրբեջանում, և իհարկե՝ Հայաստանում, անգնահատելի է: Հայերը ջանում էին *տեղայնացնել* ներթափանցող նորամուտ ոճերը (էկլեկտիկան, մոդեռնը, նեոկլասիցիզմը և այլն)՝ զուգադրելով, նախագծելով ու կառուցելով՝ իրենց անհատական ստեղծագործական սկզբունքներին ու ազգային մտապատկերումներին համապատասխան:

## ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ
## ԹԵՀՐԱՆԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Երրորդ գլխում ներկայացվում է Թեհրան քաղաքի աշխարհագրական տեղակայման, պատմական ու մշակութային կյանքի զարգացման և քաղաքաշինական տրանսֆորմացիայի մասին համառոտ ակնարկ: Ներկայացվում են Թեհրանի թատերական շենքերի տիպաբանական առանձնահատկությունները՝ միջազգային զուգահեռներով: Գլխում ներկայացվում են մեր կողմից ընտրված և ուսումնասիրության

ենթարկված ցուցակագրված թատերական շենքերի հորինվածքային, տիպաբանական առանձնահատկություններն ու մանրամասները: Հատուկ ընդգծվածությամբ ներկայացվում է Թեհրանի Լալեհզար փողոցի հիմնադրման, կառուցապատման ու մշակութային զարգացման մանրամասները, նրա դերը թատերական շենքերի և թատերական արվեստի զարգացման համատեքստում, ինչպես և անդրադարձ է կատարվում նշյալ շենքերի տիպաբանության վերհանմանն ու վերլուծությանը:

Թեհրանի պատմության, քաղաքաշինության, քաղաքային կառուցապատման և մշակութային կյանքի զարգացման ընթացքի ուսումնասիրությունը հետաքրքրական է՝ Իրանի պատմության նորագույն շրջանի համատեքստում՝ ի դեմս Իրանի թագավորներ Ռեզա Շահ Փահլավիի (1925-1941) և նրա որդու՝ Մոհամմադ Ռեզա Փահլավի շահի (1941-1979) գահակալության օրոք, երբ ժամանակակից շենքերը փոխում են Թեհրանի կերպարային տեսքը: Փոփոխությունները շարունակվում են 1979 թ. Իսլամական հեղափոխությունից հետո ևս, երբ Թեհրանի քաղաքաշինությունը հասնում է իր զարգացման գագաթնակետին: Թեև 1855 թ. Թեհրանի առաջին զարգացման նախագիծն ընդգծում էր ավանդական տարածական կառուցվածքը, ճարտարապետությունը, սակայն, գտավ *էկլեկտիկ* արտահայտություն: Թեհրանի ճարտարապետական վերափոխումը ավանդականից՝ ժամանակակից, իրականում սկսվել էր դեռևս Քաջարական Նասերոդդին շահի օրոք (1848-1896): Հետագայում, փոփոխությունների գործընթացը մեծապես փոխում է քաղաքի դեմքը՝ ի դեմս եվրոպական ճարտարապետության ներթափանցման: Արդեն 20-րդ դարակեսին Թեհրանում ձևավորվում է այնպիսի ճարտարապետություն, որը թեև ժամանակակից էր, *բայց հարդարանքի և շինությունների ճակատային հարդարման առումով ներշնչված էր իրանական ավանդական և հնագույն ճարտարապետության ոգով*: Ժամանակաշրջանի ճարտարապետները այս կերպ փորձում էին վերականգնել Իրանի «կորցրած փառքը»՝ հնագույն իրանական ճարտարապետության մոդելավորման միջոցով: Քաղաքի տեսքը տարբերվում էր քաղաքի տարբեր մասերում՝ կապված աշխարհագրական, տնտեսական, մշակութային և պատմական գործոնների հետ: Վարչական, գրասենյակային և կառավարական շենքերը տեղակայված էին հիմնականում քաղաքի կենտրոնում: *Քաղաքում գործում էին թատրոնների ավելի քան 40 շենքեր, որոնցում տեղի էին ունենում թատերական ներկայացումներ*:

Այս ժամանակաշրջանում Թեհրանի մշակութային կյանքում իր կարևորագույն տեղն է զբաղեցնում *Լալեհզար փողոցը, որն իր ուղիղ ազդեցությունն ունի Թեհրանի թատերական կյանքի զարգացման վրա*: Լալեհզարում իրենց ժամանակն էին անցկացնում Թեհրանի նորաբնակները, մտավորականներն ու օտարերկրացիները: Լալեհզարում նոր արևմտականացված երևույթները հեշտությամբ յուրացվում ու զարգանում էին՝ ի դեմս վեր խոյացող գրախանութների, թատրոնների, կինոթատրոնների, երաժշտական ակումբների, բարերի և այլն: *Այսպիսով*՝ իրանցիները ծանոթացան *մոդեռնիզմի* հետ: Թատրոնի առաջին սրահը և առաջին կինոթատրոնը կառուցվել են Լալեհզար փողոցում: Հարկ է նշել, որ Փահլավիների իշխանության վերջին շրջանում, Լալեհզարը կորցրեց իր դերակատարությունը, այստեղ առկա շինությունների մի մասը դժբախտաբար փոխակերպվեցին, իրացվեցին այլ նպատակների համար կամ պարզապես քանդվեցին:

Հարկ է նշել, որ Իրանում թատրոնը սկզբնավորվել է դեռևս հնագույն

ժամանակներից (մ.թ.ա. 641-1000), որի վերաբերյալ առաջին հիշատակությունը և «դերասանություն» երևույթը ժողովրդի շրջանում, ներկայացվում էին արարողակարգային թատրոններում՝ լեգենդար ու ազգային հերոսներին փառաբանելու և թշնամուն նվաստացնելու համատեքստում, ինչպիսիք են՝ «Սիավուշի սուգը» կամ «Մոխ Կոշին» (Մեգախունի. սա Գույլաումեի սպանության հիշատակի տոնն էր և Մեծն Կյուրոսի թագավորական իշխանության նշանավորումն Աքեմենյան դարաշրջանում), ինչպես նաև պարեր, թատերական պատմություններ, դիցաբանական և սիրային երաժշտական պատմություններ: Դրամատիկ ներկայացումների թվում էին «Խայմեշաբբազին» (տիկնիկային ներկայացումներ), «Սայեժբազին» (ստվերային ներկայացումներ), «Ռուհոզին» (կոմիկական ներկայացումներ), «Թաեզեն» (Շիիթական նահատակության պիեսներ), «Քեյմեհ-շաբ-բազին» (պարսկական ավանդական տիկնիկային ներկայացումներ, որոնք ցուցադրվում էին փոքր պալատում): Ներկայացման մեջ ընդգրկված էին երկու հոգի՝ երաժիշտ կատարողը և *"մորշեդ"* կոչվող անձը: Ուշագրավ են *Թազիեհն ու Նաք(ղ)ալին,* որոնք համարվում են ավանդական պարսկական թատերական ժանրեր: Ըստ պարսկական ավանդության, *Թազիեհն ու Փարդե-խանը*՝ ներշնչված էին պատմական և կրոնական իրադարձություններով, խորհրդանշում էին էպիկական ոգին և դիմակայությունը, սիրո ու զոհողության, հերոսական հեքիաթներով և չարի դեմ պայքարով: Մինչդեռ Արևմուտքում դրամայի երկու հիմնական ժանրերը կատակերգությունն ու ողբերգությունն էին, իսկ Իրանում *Թազիեհը* կարծես թե գերիշխող ժանր էր: *Թազիեհը* համարվում է պարսկական օպերա, որը շատ առումներով հիշեցնում է եվրոպական օպերան: Նշյալ ներկայացումներն իրականացվում էին հիմնականում հանրային վայրերում՝ զբոսայգիներում ու հրապարակներում: Հետագա տարիներին Եվրոպայից վերադարձած արվեստագետների գործունեությունը բարելավեց թատերական միջավայրը և առաջին անգամ ձևավորվեց մշտական թատրոն: Այսպիսով, իրանական պրոֆեսիոնալ թատրոնը ակտիվորեն սկսեց գործել հատկապես Իրանի մայրաքաղաք Թեհրանում, որի զարգացումը մեծապես կապված է Քաղաքային թատրոնի կամ *Թատրոն-էլ Շահրի* հետ:

Գլխի շրջանակներում ներկայացվում է նաև *Թեհրանի Թեքիեհ Դովլաթ Թագավորական Թատրոնի և Ալբերտ Թագավորական Սրահի համեմատական ուսումնասիրությունը, որոնք* առաջին հայացքից իրար նման լինելով հանդերձ՝ ճարտարապետական առանձնահատկությունների առումներով շատ տարբեր են: Երկու շենքերն էլ կառուցվել են 19-րդ դարում, երկու տարբեր ազգերի ճարտարապետների կողմից: Հատակագծային լուծումները տարբեր են. շրջանաձև Թեքիեն աշխարհիկ թատրոն էր և առավել նման էր Հռոմի պանթեոնին, մինչդեռ Ալբերտ Սրահը օվալաձև է և հորինվածքային առումով բխում է Հռոմի Կոլիզեյի ավանդույթներից:

Հարկ է արձանագրել, որ արդեն 1960-ականներին ձևավորվում է Իրանի ազգային թատրոնի կենտրոնը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ազգային հանձնաժողովի հովանու ներքո: Ներկայումս պրոֆեսիոնալ թատերական արվեստը երկրում ներակայցվում է հիմնականում մայրաքաղաք Թեհրանում:

Գլխում ներկայացվում են Թեհրանի տարածքում ընտրված ու ցուցակագրված 13 թատերական շենքերի տիպաբանական առանձնահատկությունները, դրանց հատակագծային լուծումները, շենքերի մանրամասները, թատրոնների գործառույթները,

ինչպես նաև՝ դրանց բեմերի տեսակները, դահլիճների իրավիճակն ու հարմարությունները: Դրանք ներկայումս Թեհրանում գործող թատերական շենքերն են՝ պահպանված Փահլավի II շահի կառավարման և նրան հաջորդող ժամանակաշրջաններից ի վեր: Դրանցից մի քանիսը բազմագործառութային են, այսինքն՝ բացի թատերական գործառույթներից, այստեղ իրականացվում են նաև այլ գործունեություններ: Ուսումնասիրված թատերական շենքերն են 1.Քաղաքային թատերական համալիրը (Գլխավոր, Չահարսու, Սեյեհ, Քաշքայի կամ Ղաշղայի դահլիճներով), 2.Սանգլաջ, 3.Մեհրաբ, 4.Մոլավի, 5.Վահդատ, 6.Ֆիրդուսի թատրոնները, 7.Թեհրանի Արվեստի կենտրոնը (Անդիշեհ և Մեհր թատերասրահներով), 8.Իրանշահր, 9.Բահման, 10.Նիավարան թատրոնները, 11.Տիկնիկային կենտրոնը (Գոլեստան և Բուստան սրահներով), 12.Արարատ, 13.Հոնար թատրոնները, որոնք *Իրանում ձևավորվել են արդի ժամանակներում: Փաստորեն, մինչև արդի փուլը թատերական ներկայացումներն Իրանում կատարվում էին բացօթյա հրապարակներում, թեքյեներում և այլ հանրային վայրերում: Միայն մոդեռնիզմի փասնամյակներին, թատերական ներկայացումները տեղափոխվեցին թատերական նորակառույց շենքերից ներս:*

Նշյալ շենքերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Թեհրանում գործող թատրոնները հիմնականում երկու տիպի են. ա) *պրոսկենիում կամ խորքային բեմով,* որն արտացոլված է մայրաքաղաքի Քաղաքային թատրոնի գլխավոր դահլիճի, Սայեհ, Վահդատ, Սանգլաջ, Մեհրաբ թատրոնների, Մոլավի թատերասրահի Քուչակ դահլիճի, Անդիշեհ և Մեհր թատերասրահների, Իրանշահրի գլխավոր դահլիճի, Բահման, Ֆիրդուսիի, Նիավարան, Արարատ և Հոնար թատերասրահների դեպքում: բ) *սև արկղի տարբերակով,* որոնք տարբերվում են նաև ըստ կիրառված դահլիճի նստատեղերի, ինչպես Մոլավի թատրոնի գլխավոր դահլիճը, Սամանդարյան, Չարսու, Ղաշղայի, նաև՝ Բուսթան և Գոլեսթան թատերասրահներն են:

Օգտագործված նյութերի հիման վրա կարելի է իրականացնել տիպաբանությունը, որի արդյունքում տեսանելի են թատերական շինությունների ֆասադի տեսակները, այդ թվում՝ աղյուսե ֆասադ, որն ընդգծում է շինության ավանդական ինքնությունը (Քաղաքային թատրոնի համալիրը, Արվեստի կենտրոնը՝ Անդիշեհ, Մեհր թատերասրահներով և Իրանշահր թատրոնի շենքը): Աղյուսե և բետոնե ֆասադի համադրությամբ առանձնանում են Արարատ մշակութային կենտրոնի շենքը, Բուսթան և Գոլեսթան թատերասրահները: Բետոնե կոնստրուկցիաներով իրականացված ֆասադի օրինակներն են հանդիսանում Սանգլաջ, Մոլավի, Ֆիրդուսի և Նիավարան թատերասրահները: Բետոնի և քարի համադրությամբ կառուցված են Վահդատ և Բահման թատերասրահները: Ապակու և մետաղի համակցությամբ է արված Հոնարի թատերասրահը:

Ինչ վերաբերում է ներկայացված թատրոնների հանդիսասրահներին (բեմը և դահլիճը), ապա դրանք տարբերվում են բովանդակ տեսակներով. *շարժական նստարաններով դիտադահլիճ* (Մոլավի թատրոնի դահլիճները, Իրանշահրի թատրոնի Սամանդարյանի դահլիճը, Բուսթան և Գոլեսթան թատերասրահները, Քաղաքային թատրոնի համալիրում տեղակայված Ղաշղայի և Չարսու դահլիճները), *կիսաշրջանաձև դիտադահլիճով (240 աստիճան շրջափակում).* նման ձևով են կառուցված դեռևս թատերական առաջին շինություններն Իրանում, որը գալիս է եվրոպական թատրոնների

օրինակներից (Քաղաքային թատերական համալիրի գլխավոր դահլիճը, Սանգլաջ, Վահդատ թատերասրահները, Արվեստի կենտրոնի Անդիշեհ դահլիճը և Բահմանի թատրոնի Ավինի դահլիճը), *ուղղանկյանաձև դիփադահլիճով* (Մեհրաբ, Ֆիրդուսի, Արարատ, Հոնար դահլիճները, Բահմանի թատրոնի Մոքարաք դահլիճը, Նիավարանի համալիրի Գուշեհ դահլիճը, Իրանշահրի գլխավոր դահլիճը և Արվեստի կենտրոնի Մեհր դահլիճը):

Թեհրանյան թատերական շենքերի համատեքստում բեմն ընկալվում է որպես հորինվածքի կենտրոն, իսկ մյուս հատվածները տեղակայվում են ըստ դրա: Համամասնության տեսանկյունից, ոսկե միջինը համարվում է թատրոնի այն տեսակը, որն ստացվում է դահլիճների ամբողջական երկայնքի և բեմի ծայրերի միջև: Բեմի այս համամասնությունը պահպանվում է նաև նախապատրաստության (կամ օժանդակ) և ներկայացման համար նախատեսված տարածքների միջև (օրինակ, Սայեհ, Ղաշղայի և Չարսու թատերասրահներ):

Ներկայացված թատերական բոլոր շինությունները սիմետրիկ են գլխավոր առանցքի նկատմամբ: Թատրոնի դահլիճը տեղակայվում է ըստ սիմետրիայի առանցքի կամ դրա հակառակ ուղղությամբ, ինչպես, օրինակ, Արարատ և Հոնար թատերասրահներն են, կամ էլ այն կարող է չհետևել միևնույն դասավորվածությանը, ինչպես, օրինակ, Վահդատ թատերասրահը: Սև արկղի տեսք ունեցող կառուցվածքները բացառություն են կազմում այս դասավորության հետ համեմատած, քանի որ այդ դեպքում նստատեղերը հարմարեցվող են:

Թեհրանյան թատերասրահների երկրաչափական հորինվածքը ձևագոյանում է ուղղանկյան և շրջանաձևի համակցությամբ կամ դրանցից որևէ մեկով: Իրանյան թատրոնների մեծ մասն ունի ուղղանկյան տեսք, իսկ վերը նշված տեսակները կարելի է տեսնել Վահդատ, Սանգլաջ թատրոններում, ինչպես նաև Արվեստի կենտրոնում տեղակայված Անդիշեհ թատերասրահում: Միակ շինությունը, որն ունի շրջանաձև տեսք՝ Քաղաքային թատրոնի դահլիճներն են:

Ինչ վերաբերում է բարելավված թատերական շինություններին, ապա դրանք ունեն հենակետային երեք և այլ կառուցվածքներ, այդ թվում՝ *բեփոնե սյան և հեծանով* կազմված համակարգը (Սանգլաջ, Վահդատ թատրոնների ու Արվեստի կենտրոնի Մեհրաբ թատերասրահի պարագայում), *երկաթե սյունով և հեծանով* կառուցվածքները (Արարատ թատրոնի շինությունը): Վերոնշյալ երկու կառուցվածքների նման շրջանաձև համակարգը ևս ունի իր առավելությունը. այն կենտրոնում ստեղծում է դատարկ տարածություն, որը կարող է կիրառվել որպես տրանսֆորմացվող դահլիճ: Այդպիսին է Քաղաքային թատրոնի համալիրը, Արվեստի կենտրոնի Անդիշեհ թատերասրահն իր խորշերով հանդերձ: Այս կառուցվածքը հրաշալի հնարավորություն է տալիս կերտելու ուղղանկյուն ընդարձակ դահլիճներ, որոնցից է Իրանշահր և Հոնար թատրոնների շինությունները, ինչպես նաև ստեղծելու կառուցվածքի տարածական հենք: Վերջինս թեթև կառուցվածքային համակարգ է, որը կարող է ընդգրկել մեծ տարածություն՝ առանց սյուների օգտագործման, ինչպիսին է Բահմանի շինությունը: *Երկաթբեփոնե պապով* համակարգի կիրառումը, որը չունի առանձին սյուներ արտահայտված է Նիավարանի թատրոնի, Բուսթան և Գոլսթան թատերասրահների շենքերում:

Թեհրանի 13 թատրոնների ուսումնասիրությունից հետո կարելի է իրականացնել գույներով և կիրառված նյութերով պայմանավորված դասակարգում առ այն, որ ներքին

տարածքներում ամենաշատ կիրառված նյութը փայտն է (Քաղաքային թատրոնի համալիր): Սև գույն ունեցող նյութերի կիրառումը հիմնականում Սև Արկղի տեսք ունեցող դահլիճներում է գերակշռում (օրինակ՝ Ղաշղայի թատերասրահ): Քարի կիրառումը հաղորդում է փառքի և հանգստության զգացում (Բահման թատրոնի Ավինի թատերասրահ): Իսկ թավշյա վարագույրների և կտորեղենի կիրառումը հաղորդում է արքայական զգացողություն և շքեղության միտվածություն ունի: Թեհրանի թատերասրահներում օգտագործված են տաք գույներ (կարմիր)՝ բացառությամբ Սանգլաջ թատերասրահի, ուր կիրառված են կրեմագույնն ու մուգ կապույտը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Թեհրանի թատրոնների ճարտարապետությունը ձևով և բովանդակությամբ ամենակատարյալներն են իրանական իրականությունում: Որքան էլ ճարտարապետության մեջ թերի ամբողջությամբ արտացոլված են միջազգային թատրոնների 19-րդ դարի և նրան հաջորդող ժամանակաշրջանները, այնուամենայնիվ այն ճարտարապետական ձևաբանական հարցերում ուշագրավ է իր ազգային ժառանգորդականությամբ: Սա շատ դեպքերում խլացրել է նախորդ՝ դասական ճարտարապետության լուծումները, որոնք այստեղ միանգամայն պարսկական առանձնահատկություններով են: Թեհրանի քաղաքային կենտրոնում եղած թատերական շենքերում կան նաև միջնադարյան՝ իսլամական ճարտարապետության հարադարանքային տարրերով արտահայտված օրինակներ ևս (տե՛ս Թեհրանի Քաղաքային թատրոնի, Արարատ մշակութային կենտրոնի, Մեհրաբի, Չահարսուի և այլ շենքերը):

2. Առանձնապես ուշագրավ է 19-րդ դարի և 20-րդ դարի՝ մինչև Իրանի իսլամական հեղափոխությունը (1979թ.) թատերական շենքերում եղած տարբերությունները, որոնք արդյունք են ժամանակների գաղափարախոսությունների: Այդ գործընթացում մեծ են նաև հայկական թատերախմբերի միջոցով փոխանցված առանձնահատկությունները: Իրանում և Օսմանյան Թուրքիայի, ինչպես նաև Կովկասի մայրաքաղաքներում գործունեություն ծավալած հայկական թատրոններն իրենց ճարտարապետական զարգացման վերափոխումային տենդենցներով (նորդասականություն, էկլեկտիկա, Ար-Նուվո) արտահայտված են նաև Թեհրանի թատրոնների հորինվածքում: Հայկական թատրոնները իրենց շարժունությամբ նաև նորարարության ներմուծման ակունքներ հանդիսացան, լինի դա հետաքրքրություններով, և թե ճարատարապետանախագծային ներդրմամբ:

3. Թեհրանի թատրոնները կարելի է բնութագրել հետևյալ առանձնահատկություններով.

***Ա.Պարբերացման առումով՝*** **Թեհրանում գոյություն ունեցող թատրոններն անցել են զարգացման երկու հիմնական փուլ.**

*ա) 19-րդ դարից մինչև Իրանի իսլամական հեղափոխությունը,*

*բ) Իսլամական հեղափոխության դարաշրջանը:*

***Բ.Քաղաքաշինական առումով՝*** **Թեհրանի գլխավոր հատակագծում** բացի Բահման և Նիավարան թատրոններից՝ թատրոնների բոլոր շենքերը տեղակայված են քաղաքի կենտրոնում և գտնվում են միմյանցից շատ քիչ հեռավորության վրա:

***Գ. Տիպաբանական առումով՝*** Թեհրանում գործող թատրոնները կառուցվել են հիմնականում երկու տեսակի բեմական տարբերակներով՝ ա. պրոսկենիում կամ խորքային բեմով, բ. Իրանի ժառանգորդական *սև արկղի*՝ բաց բեմի սխեմայով:

4. Դահլիճները դասակարգելի են որպես՝ կլոր ուրվագծով սեղանաձև և ուղղանկյուն տարբերակներով, որոնց տարողությունը տատանվում է 500-1500 հանդիսատես ընդգրկողությամբ: Հատակի թեքությունը բոլոր տարբերակներում էլ կորագծային վերազանցման եղանակով է:

***Դ. Հորինվածքային առումով*** ՝ նշելի է, որ Թեհրանի Քաղաքային թատրոնի համալիրն ու Վահդատ թատրոնի դահլիճը այն երկու բացառություն կազմող շինություններն են՝ կառուցված Փահլավի II-ի իշխանության օրոք, որոնք ներսույթում իրականացված են մոդեռնիստական լուծումներով:

5.Թեհրանի թատրոնների ճարտարապետությունը, ընդհանուր առմամբ մոնումենտալ լինելով հանդերձ, նկատելիորեն դրանցում համեմատականորեն հարուստ են ինտերիերային մասերը: Ընդ որում ձևավորման խնդիրներով ավելի կատարելագործված են գործառույթային հարցերը, քան գեղագիտական լուծումները: Երբ իրանյան թատրոնի շենքերը դիտարկվում են միջազգային զուգահեռներով, նկատելի է, որ համաշխարհային օրինակներն ունեն որոշակի ծավալատարածական կերպարային միաշնչություն, մինչդեռ իրանյան օրինակները միասնական չեն ներքին և արտաքին լուծումներում: Ճարտարապետական միաշունչ լուծումներով բացառություն է Թեհրանի Քաղաքային թատրոնի համալիրը: Մնացյալ թատերական շենքերում ինտերիերում և էքստերիերում նկատվող ճարտարապետական երկտվությունն արդյունք է արտաքին լուծումներում տեղական միջավայրային համասեռության ստեղծման, որին մեծ նշանակություն է տրվում իրանյան ճարտարապետության մեջ:

***Ե. Տեխնոլոգիական և շինարվեստի առումով՝*** Թեհրանում/Իրանում առկա թատերական շենքերն իրականացված են հին՝ սահմանափակ սկզբունքով, մինչդեռ նաև անհրաժեշտ են թատրոնի շենքեր, որոնք օժտված կլինեն ավանդական բնույթով, ինչպես նաև այնպիսինները, որոնք կունենան բազմատարածքային հատուկ դահլիճներ, ինչպիսիք համաշխարհային օրինակներն են:

6. Թեհրանի կամ իրանյան թատերական շենքերը տրանսֆորմացիայով սահմանափակ են, որի գլխավոր պատճառը կրոնական հայացքների արգելափակվածությունն է: Փաստորեն, միջազգային ակնարկվող շենքը դահլիճի ու բեմի տրանսֆորմացիաներով առաջադրում են թատերական բազմակի հետաքրքրություններ, մինչդեռ թեհրանյան օրինակները տրանսֆորմատիվ առումով կիրառում են ֆունկցիոնալ գործառույթներ, ինչպես՝ դրամա, գիտաժողով կամ համերգներ: Չկան օպերայի, բալետի, սպորտի և այլ ժամանակակից հետաքրքրությունների իրականացման հնարավորություններ:

***Զ. Մշակութային փոխազդեցությունների առումով՝*** պետք է ընդգծել իրանյան մշակույթի և ճարտարապետության երկու զարգացման փուլերի գոյությունը: Այն մինչև իսլամական հեղափոխությունը կատարված ձևի և բովանդակության արևմտականացման երևույթ է:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


1. **Малек Мохаммади, С., Унанаян, А., Л.,** Архитектура театральных зданий города Еревана (конец 19-го-начало 20-го вв.), “Научние вести”, N 5(22), Белгород, 2020, С. 229-240

2.**Malek Mohammadi, S.,** Compositional features of the theatre planning in Tehran: Vahdat (formerly Roudaki) Theatre hall – the main and only opera house of the capital city, “Science and the world”, International scientific journal, N 6 (70), vol. II, Volgograd, 2019, P. 66-70

3. **Malek Mohammadi, S.,** Contribution of the Armenians in the public architecture in Tbilisi and Baku (construction of the theatre buildings in the late 19th and early 20th centuries), “Научние гаризонты”, N 8 (24) 2019, Belgorod, P. 93-104

4.**Մալեք Մոհամմադի, Ս.,** Իրանահայերն ու նրանց ներդրումը իրանյան թատերարվեստի զարգացման գործում, Ակտին Յեկտա - գրականության, մշակույթի և արվեստի հետազոտությունների գիտական ամսագիր, N 46, Թեհրան, 2019, էջ 1-7 (պարսկերեն)

5.**Մալեք Մոհամմադի Ս.,** Քաղաքային թատերական համալիրի ճարտարապետությունը Թեհրանում, ԿԱՆԹԵՂ. գիտական հոդվածներ, 3 (76), Երևան 2018, էջ 203-210

6.**Մալեք Մոհամմադի Ս.,** Լալեհզար փողոցի վրա գտնվող թատերական շենքերը, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական իններորդ նստաշրջանի նյութեր, Երևան, 2015, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 193-199

7.**Մալեք Մոհամմադի, Ս.,** Թեհրանի թատերական շենքերի դասակարգումը, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական ութերորդ նստաշրջանի նյութեր, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2014, էջ 214-221

8.**Մալեք Մոհամմադի Ս.,** Իրանական ավանդույթները Թեհրանի թատրոնների ճարտարապետության մեջ, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասնմեկերորդ նստաշրջանի նյութեր, Երևան, 2017, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 188-202

9.**Մալեք Մոհամմադի, Ս.,** A comperative study of Takieh dowlat theatre with Royal Albert Hall in London, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական յոթերորդ նստաշրջանի նյութեր, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2013, էջ 317-324


## САРА МАЛЕК МОХАММАДИ
## АРХИТЕКТУРА ТЕАТРОВ ТЕГЕРАНА В СРАВНЕНИИ С АРМЯНСКИМИ ТЕАТРАМИ РЕГИОНА
## РЕЗЮМЕ


Данная диссертационная работа посвящена исследованию развития архитектурных театральных зданий столицы Исламской Республики Иран - Тегерана. Данное исследование проводится в сравнительном контексте с армянскими театрами региона, такими как театры Константинополя, Ереван, Тбилиси и Баку в период конца 19-ого начала 20-ого века. Известно, что иранские театральные здания составляют важную часть мирового искусства, а также значимую часть региональной традиционной архитектуры. Таким образом такие здания могут рассматриваться как симбиоз локальной национальной и мировой культуры. В диссертационной работе исследуются театры,

которые находятся в разных поселениях Ирана и региона, которые классифицируются по своему архитектурному замыслу и стилю, а так же по принципу принадлежности к исламским, восточным, русским или европейским направлениям. Рассматривается так же вопрос принадлежности к сугубо национальным или армянским эмигрантским особенностям.

Целью данной диссертации является аналитическое и методологическое исследование архитектуры театральных зданий, построенных в Тегеране. Изучение исторических и местных особенностей театров Тегерана сегодня является насущной необходимостью; это и международная, и местная категория, потому что создание театра и театрального здания требует именно этого. Настоящее исследование основано на данных армянских общинных театров, которые, кстати, на наш взгляд, являются частью театрального истеблишмента Тегерана в сочетании с европейской и местной действительностью. Таким образом, актуальность исследования определяется сравнительным характером этой работы, где помимо театральных зданий Тегерана рассматриваются однотипные постройки в Ереване, Тбилиси и Баку.

В первой главе в общих чертах представляется 2500 летняя историческая эволюция театра, начиная с истоков античного театра и заканчивая современными достижениями в области театрального строительства. Как известно, античный театр в Древней Греции и Древнем Риме определил всю последующую линию развития и становления театрального искусства. История мирового театрального искусства свидетельствует о том, что театры и архитектурные решения театральных зданий достигают своего расцвета именно в период античности. Этот процесс длится вплоть до средних веков, но в этот период наблюдается ощутимая пассивность. Прогресс наблюдается тогда, когда мировая история входит в эпоху Возрождения. Театральное искусство претерпевает огромные изменения, которые приводят к высоким архитектурным решениям. В период конца 19-ого начала 20-ого века театральные здания строятся по принципу архитектурного новшества. Что касается театральных зданий Тегерана, то они в течение многих лет, не претерпевали изменений, что фактически отображалось в архитектурных элементах не присущих иранской культуре.

В главе также кратко объясняются основные функциональные элементы зданий театра, включая зрительные и сценические комплексы, а также части, обслуживающие сцену, и административные пункты.

*Во второй главе* представлен большой вклад армянской общины в развитие театрального искусства и театрального строительства, как в ряде армянонаселенных городов Ирана (Джуга, Тебриз, Рашт) и в столице Тегеране, а также в населенных пунктов региона, таких как Тбилиси (театр братьев Зубаловых и др.), Баку (театр братьев Маилян), Константинополь (Восточный и Османский театры и др.) и, конечно же, в Ереване (Государственный академический театр им. Г. Сундукяна, Государственный академический театр оперы и балета им. А. Спендиаряна).

Вклад армянской диаспоры в строительство театров однозначен и с точки зрения архитектуры и театральных деятелей. Предложенные ими художественно-архитектурные решения зданий, показывают, что им удалось локализовать новаторские стили, особенно если принимать во внимание факт того, что их деятельность

разворачивалась в такой исторический период, когда с севера и запада внедрялись такие архитектурные стили, как эклектика, модерн, неоклассицизм и т.д. Сочетание индивидуальных принципов и национальных черт стало основной линией в построении зданий. Гастроли армянских трупп по вышеупомянутым регионам непосредственным образом отразились на диалоге культур и межкультурной экспансии.

*В третьей главе* представляется географическая локализация Тегерана в контексте исторической, градостроительной и культурной трансформации города. Особое внимание уделяется тегеранской улице Лалезар, где рассматриваются вопросы её основания, застройки и культурного развития. Обсуждается также связь этой улицы с театральным искусством и театральными зданиями. Тщательному анализу подвергаются особенности типологии театральных зданий Тегерана, проводятся параллели с международными аналогами.

Внимание акцентируется на 13-и театральных зданиях в центре Тегерана (включая Городской театральный комплекс, театры Сангладж, Мехраб, Молави, Вахдат, Фирдус, Хонар, Тегеранский центр искусств, театры Ираншахр, Бахман, Ниаварана, Центр кукольного театра, Дом культуры Арарат), которые в настоящее время работают в Тегеране, представляя их композиционные особенности и детали, включая их планировочные решения, а также функции театров, типы сцен, условия и оборудование залов и т. д.

Таким образом, мы приходим к заключению, что театральные здания в Иране сформировались в наши времена. Следовательно, до нынешнего времени театральные представления в Иране проходили на открытых площадках и в общественных местах. Только в эпоху модернизма театральные представления переместились в новостроечные здания. Только в десятилетия модернизма театральные постановки переносятся во вновь построенные театральные здания. В настоящее время профессиональное театральное искусство представлено в стране в основном в столице Тегеране, где также есть многофункциональные театры, то есть, помимо театральных функций, здесь проводятся и другие мероприятия.

**SARAH MALEK MOHAMMADI**

## THE ARCHITECTURE OF TEHRAN THEATRES IN COMPARISON WITH THE ARMENIAN THEATRES IN THE REGION

## SUMMERY

Presented thesis is dedicated to the study of the development of the architecture of theatrical buildings of the capital city of Iranian Islamic Republic - Tehran in the context of the comparison with the Armenian theaters in the region, where the theatres of Constantinople, Yerevan, Tbilisi and Baku are introduced side by side (from the end of the 19th century to the beginning of the 20th century.) It is known that Iranian theatrical buildings are considered as an important part of the world art and the traditional architecture of the region, therefore they have traditional roots, acting as an original mixture of world and local national traditions. The study considers theaters located in the settlements of Iran and the presented region; their

composition and style, Persian and Islamic, Eastern, Russian and European elements, as well as the very national, local features, and the peculiarities of the Armenian diaspora.

The aim of the research is the analytical-methodological study of the architecture of the theaters built in Tehran. The study of the historical and local peculiarities of Tehran's theaters is an urgent need today; it's both international and local category, because the creation of a theater and theatre building - that is what it requires. The present study is based on the data of the Armenian community theaters, which, by the way, in our opinion, is a part of the theatrical establishment in Tehran, combined with the European and local reality. Thus, from the point of view of the actuality of the topic, it is noteworthy that for the first time, the theatrical buildings of Yerevan, Tbilisi and Baku are being studied side by side with the theaters of Tehran.

***The first chapter*** provides a general overview of the 2,500-year-old historical evolution of a theater, that is from the origins of ancient theater to the achievements of modern theatrical construction. As it is known, in the context of the origination of theatrical art and the theatrical buildings an invaluable role is given to the ancient world - in face of ancient Greece and Rome. The study of the history of world theatrical buildings shows that in ancient times theaters reached their glory, a process which was continued until the Middle Ages, after which the activity of theaters became passive. Only after the Middle Ages, especially with the advent of the Renaissance, a revival begins in the field of theatrical art. In the theater the architectural development and the evolution is highly marked. Theatrical buildings, which were built in the late 19th and in the beginning of the 20th centuries from the architectural and artistic point of view are distinguished by unique and new qualitative features. Regarding theatrical buildings in Tehran, they have also not been free from alterations over the years, sometimes with obvious foreign architectural-stylistic elements. The chapter also briefly explains the main functional elements of the theater buildings, including the audience and stage complexes, as well as about the parts serving to the stage and the administrative points.

***The second chapter*** presents the great contribution of the Armenian community in the development of theatrical art and theater construction, as in a number of Armenian-populated cities of Iran (Jugha, Tabriz, Rasht) and in the capital Tehran, as well as in the settlements of the region, such as in Tbilisi (Zubalov brothers theater, etc.), Baku (Mailyan brothers theater), Constantinople (Oriental and Ottoman theaters, etc.), and of course in Yerevan (The state academic theater after G. Sundukyan, The state academic theatre of opera and ballet after A. Spendiaryan).

The contribution of the Armenian community in the above-mentioned regional settlements is invaluable, both in terms of theatrical figures and architects. A study of the artistic and architectural solutions of the buildings created by the latters (especially since they have operated in a historical period when eclectic, modern, neoclassicism and other architectural styles penetrated from the north and west) shows that they have tried to localize the penetrating new styles by combining, designing and building in accordance with their individual creative principles and national ideas. The visits of the Armenian theater groups to

the above-mentioned geographical areas, willingly or unwillingly, had an influential and unique opportunity to spread the dialogue of cultures.

***The third chapter*** provides a brief overview of the geographical location of the city Tehran, the development of historical and cultural life, as well as the urban transformation. The details of the foundation, construction and cultural development of Lalehzar Street in Tehran are presented with special emphasis, as well as its role in the context of the development of theatrical buildings and theatrical art. The typological features of Tehran's theatrical buildings with international parallels are presented in detail.

Thus, the study focuses on 13 selected theatrical buildings (includiny the City theatre complex, Sanglaj, Mehrab, Molavi, Vahdat, Firdus, Honar theaters, Tehran Art center, Iranshahr, Bahman, Niavaran theaters, Puppet theater center, Ararat cultural center), which currently operating in Tehran, presenting their compositional features and details including planning solutions of them, as well as the functions of theaters, their types of stages, the conditions and facilities of the halls, and etc.

As conclusion, we can conclude that the theatre buildings in Iran were formed in modern times. In fact, till the modern stage, theatrical performances in Iran took place in the open-air squares and public places. Only in the decades of modernism the theatrical performances move into newly built theatrical buildings. At present, professional theatrical art is presented in the country mainly in the capital city Tehran, where there are also multifunctional theaters, that is, in addition to theatrical functions, other activities are also carried out here.